



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԳ • 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ • — ՅՈՒՆՈՒԱՐ

է

Ի՛նչ նշանակէ այդ փոքրիկ վերնա-
գիւղդ կամ՝ լոկ գիւղդ, իբրեւ յընդարձա-
կութեան միջոցի՝ կէտ մը մինակ: — Որ-
չափ որ այն կէտն 'ի միջոցին, կամ
աստղ մի միակ յընդարձակութեան
երկնից, կամ անապատի մը մէջ քար
մը, կամ լայնածաւալ ծովուն երես
թուղջ նաւ մը, փոքրիկ բան մ'են, այն-
չափ այլ մեծ կրնան ըսուիլ անոր հա-
մար՝ որ միայն իրենք են ներկայ գը-
տուող և հորիզոնը լեցնող: Այսպիսի
բան մ'այլ և աւելի մեծ է մեր վերնա-
գիւղն. որ և իր ձեով ուրիշ ընկերակից-
ներէ (գրեթէ) տարբերուի. ոտք մը ու-
նի գետնի վրայ, գլուխն գէպ 'ի վեր, և
մէկիկ թևովն այլ կ'երևի թռչիլ յա-
րևելս, իբրեւ յաղբիւր լուսոյ և ստու-
գութեան: Չնին նման է իր ներքին նը-
շանակութիւնն այլ: — Գրանշանից մէջ
է միայն անուն չունի, այլ ինքն և ա-

նունն նոյն է՝: Յիրաւի այս բանս, ինչ-
պէս ձենն այլ, աւելի մեր Հայ լեզուին
գրանշանից յարմարին՝ քան իսկու-
թեան, բայց այս այլ զարմանք կամ դի-
տելք մը կ'աւելցնէ իր ուրիշ յատ-
կութեանց վրայ, զոր առաւելապէս
կ'ընծայէ Հայ լեզուն: Ինչպէս որ է ա-
նուամբն անխառն և կոյս է, այսպէս
նաև թուական նշանակութեամբն. վասն
զի այբուբենից մէջ եօթներորդն ըլլա-
լով՝ թուարանութեան մէջ այլ նշանա-
կէ եօթն զարմանալի թիւը, որ արմա-
տական թուոց մէջ անզոյգ է, ոչ հա-
ւասար բաժնուիլ կրնայ և ոչ հաւասար

1 Ամէն գիրն առանձին անուն ունին, ինչպէս
Ա՛ այբ, Բ՛ բեն, Ն՛ եչ, Ի՛ ինի, և այլն և այլն: Է՛
էն զատ միայն Ո և Օ անանուն են թէ և Օ ալ
այբ-Է՛ն անուանած է երբեմն. և Ո բառից մէջ և
սկիզբն և առանձին նոյնպէս չարտաբերի. միայն
է միշտ նոյնպէս կ'արտաբերի և կ'անուանի:

բարդուիլ (տասն թուոց մէջ), ինչպէս
մէկ այլ ամեն թիւերն. հապա միայն
կրնայ բոլորովին քակուիլ լուծուիլ,
այսինքն մէկ մէկ ըլլալ՝ եօթն անգամ:
Այս բանիս համար կոչս կամ կոչաւս կան
թիւ կ'ըսուի, և նուիրական նշան մը սե-
պուի. իսկ անանուն կամ ինքնանուն
ըլլալուն համար՝ անիրակ գիր կամ բաց-
արձակ տառ ըսուի: Եւ այս երկու
մեր լեզուիս սեփականութեանց վրայ՝
գերազոյն մ'այլ կ'աւելնայ՝ նոյն է՝ զԱս-
տուած նշանակելով¹: Այսքան յատ-
կութիւնը կամ հանդիպութիւնը կար-
ծեմ կ'արժեն գոնէ քիչ մը մտադրու-
թեան բանասէր անձի մը: — Բայց մեր
միտքն աւելի մեծ՝ բարոյական և իմաս-
տասիրական դիտելիք է:

Եթէ սոսկական տառից և նշանա-
գրաց ձևերն, թիւերն, ձայներն ու նիւ-
թական յարմարութիւններն դիտուին՝
յիրաւի կրնայ ծիծաղական, սղայա-
կան, խտրական, կապալալական ուսումն
երևիլ. բայց երբ ճանչնամք զգիրը տարր
բառից և բանից, խօսից և խորհրդոց,
խնդիրն ոչ միայն կու փոխուի, այլ և
կու բարձրանայ իմաստասիրութեան
վսեմագոյն սահմանները. մանաւանդ
թէ այդ ձևերն, տառերն կու բարձրացը-
նեն զիմաստասիրութիւն, որ է ըսել
զմիտս, յղանալով, ծնանելով և աճելով
'ի միտս, կամ զնա ինքն զմիտս ծնուցանե-
լով և աճեցընելով: Քանի որ առանձին
առանձին և իրարմէ անկախ են գրերն՝
բնական տարբերաց կու նմանին, որովք
կու ձևանայ ամեն նիւթ. բայց իրենք
իւրաքանչիւր առանձինն գրեթէ բան
մը չեն ձևանար: Միայն հոս այլ կ'երևի
առաւելութիւն ինն. վասն զի մինչ բա-
ղաձայն գրերն ամենեկին աննշանակ են,
և 'ի ձայնաւորաց ոմանք միայն կ'իսա-
նիչ անկատար կրից սկզբունք մը կրը-
նան յայտնել իբր ձայնարկութիւն (ա.

ն. 6) Էն ոչ միայն նոյնպէս և աւելի ալ
ազնիւ ձայնարկութիւն է (է'), այլ և
որոշ ամբողջ բաներ կու նշանակէ, ինչ-
պէս, բռն, բռն, եռքիռն, խառառ-
տռքիռն, Աստռառ, և այլն: Այսպէս,
որ կերպով այլ քննեմք ու տեսնեմք՝
զարմանալի և ունեւոր բան մը գտնեմք
զ'է': — Բայց դառնանք նորէն իր ընկե-
րաց:

Երբոր քանի մը տառ տառի, կամ
գիր գրի քով գան՝ կու կազմի բառ,
ինչպէս որ քերականէն դիտեմք. նոյն-
պէս այլ սովորեր եմք թէ բառերն իրենց
բանական քննութեամբ, եօթն կամ
ութ նախադաս ցեղ զանազանին, որ
են. Անուն, Դերանուն, Բայ, Դերբայ,
Մակբայ, և այլն. բայց այս եօթն կամ
ութ ցեղից մէջ արմատագոյն կամ ըս-
կըզբնականք երկուք են, Անուն և Բայ:
Այս երկուքին մէջ այլ զլիաւորութեամբ
կամ սկզբնականութեամբ յաղթող կ'ել-
նէ Բայն. վասն զի այս է կրից և ներ-
գործութեանց յայտարար, և մարդս՝
բանական կենդանի՝ կրիւք և ներգոր-
ծութեամբքն է և կ'ըսուի մարդ: Ուրեմն
իր լեզուին, որով և մտածութեանցը,
բոլոր իր սեփականագոյն կամ զլիա-
ւորագոյն յատկութեանն ներգործին է
Բայն: Իմաստասէրն (կամ ըսաւ ևս ը-
սեմք հոս) մտաւոր մարդն՝ ինքզինք քըն-
նելով և զԲայն այլ վերլուծելով կու զա-
նազանէ ըստ կրից և ներգործութեանց
քանի մը տեսակ, էական, ներգործա-
կան, կրաւորական, և այլն. ասոնց մէջ
այլ զլիաւոր և սկզբնական կու ճանչ-
նայ զէւսկան Բայն, որով ամեն Բայք
ձևանան, և են ըստ մեր լեզուիս, Եմ,
Գոմ, Լինիմ, Եղանիմ: Այս էական տե-
սակին առանձնակաց մէջ այլ արմա-
տագոյն ճանչնայ՝ զառաջինն Եմ, այս-
պէս անուանելով մարդուս ինքեան ա-
ռաջին զգացմունքէն՝ որ է Ես Եմ, կամ,
Բան մ'եմ. և այլն: Արդ բոլոր Բայերէն,
բոլոր բառերէն, բոլոր էականներէն,
զայս արմատ բայս առած, դարձեալ
զայս այլ կու վերլուծէ, և անոր մէջ
սկզբնական կամ տարրագոյն և արմա-
տոց արմատ՝ կու գտնէ զնոյն ինքն Ե.

¹ Այսպիսի մտօք կ'ըսէ հոգեբոլ շարական
մեր վասն Քրիստոսի. «Որ անփակ գրով հաստա-
տեալ քարտէզ՝ կնքի մատանեաւ», քահանայ-
իցն 'ի Թաղմանն. այսինքն, կամ զի քահանայից
կնքոյն նշանն էր Է՝ անունն Աստուծոյ, և կամ
զի ինքն Քրիստոս անփակ անուամբ Էն՝ կնքեցաւ
փակեցաւ քահանայից մատանեաւ:

դանակն : Եւ այսպէս լուծմանց 'ի լուծմունք իջնելով, արմատէ արմատ, տարբէ տարբ, ահա ամենայն բառից և բանից սկզբնատարր կու գտնեմք զ'ի. և բառ կամ բան ըսելով՝ մի հասկընար միայն յօդաձայն հնչումը, այլ զբուն բանն, որով մարդս և ամենայն հոգեղէնք, թանակաւն կ'ըսուին, իսկ ուրիշ կենդանիք՝ ձկնաւ : Ուրեմն ըսել կու գայ՝ թէ մեր բանականութեան և մտածութեան (նոյն է ըսել մտաց և բանին) նախատարրն այլ է՝ Ի :

Հիմայ կարծեմք իչ մը իմացար վերնագրիս իմաստը, և եթէ ուզես աւելի իմանալ, դիւրին է այդ աշխատանքդ : — Եթէ կ'ուզես, կ'ըսեմ, համազուիլ իմանալ, թէ ինչպէս մտացը և գիտութեանցը սկզբնատարրն եղած է Ին, նայէ չգիտցածիդ վրայ. երբ աչքդ, միտքդ նոր բան մը կու տեսնեն, կամ առաջին ըմբռնողութիւն մը կ'ունենաս, կ'ուզես լաւ ըմբռնել, իմանալ, ճանչնալ, ինչ կ'ընես (առանց իսկ դիտմամբ ընելու). մէկէն կ'ըսես մտքդ, այդ ինչ է... Ուրիշ բան մը հանդիպեցաւ, Այս ինչ է... Եթէ իմացար բան մը՝ կու հաստատես մտքդ, թէ այսպէս է. և թէ նորէն ճանչնաս՝ կ'ըսես սա է. եթէ դեռ ճանչնալու բան կայ վրան, արդեօք ինչպէս է. ահա նորէն է կու մտնէ, է կու փնտռուի. փնտռածիդ կ'ըսես ինչ է. տարակուսածիդ արդեօք է. հաւանածիդ այս կամ այսպէս է. վերջապէս թէ գտնելու թէ ճանչնալու թէ պահելու թէ յայտնելու համար՝ պէտք կ'ըլլայ և կ'ըսուի Ի :

Հապա թէ որ միտքն աշխատելով՝ չկարենայ գտնել կամ ճանչնալ կամ հաստատել ինչ կ'ըսէ. — Չ՝ է. փոխանակ Ի՞ կու մտնէ Չ, որ է ամենին հակառակ Ի՞, և ձևովն ու քանակովն այլ անոր հետ զարմանալի հակադիմութիւններ և յարմարութիւններ ունի : Նայէ այդոր վրայ և ուրիշ տառից վրայ, ինչպէս Ի՞ ամենէն թեթեւակաց թեթեակովն կ'երևի գրերու մէջ, Չ այլ գրեթէ ամենէն աւելի հաստատանիստ, դանդաղ գետնեղած. դարձեալ հակառակ

Ի՞ն արեւելեան թռչանաց Չ՞ գլուխը դարձած է յարմուտս, 'ի մութս : Եւ աւելի զարմանք՝ Չ՝ Ի՞ն հարիւրապատիկ յարաբարդութիւնն է. վասն զի Ի եօթն, իսկ Չ՝ աւելի եօթնհարիւր նշանակէ. և այսոր համար մեր հին վարդապետք կատարեալ Ռաւգիստ կոչեցին զ'Չ թիւ : Գիտութիւնն՝ միշտ գնացք խաղացք յառաջ, արեւը, Ի է. տգիտութիւնն՝ կացք մնացք վերջ, արեւմուտք, Չ : Բայց այս այլ յիշելու է, որ երբեմն զ'Ին այլ քննելով՝ նոր նոր մութութիւններ կ'ենեն, և կարենայ ըլլալ որ Ի մը, ինչդիր մը, գիտելի մը փրնտելով և իբր հետազոտութեան մէջ թաւալելով հարիւր կամ եօթնհարիւր անգամ այլ, կրնայ վերջապէս խրիլ Չ՞ մէջ և հոն մնալ. այսինքն անծանօթ մնալ : Այս բանս մարդուս մտաց բացարձակ կամ առանձնակ տկարութեան արգասիքն է : — Բայց դառնանք նորէն մեր Ի՞ն :

Ամեն բանի վրայ առաջին եղած մը տածութիւնն կամ ճանաչողութիւնն էն է. այսինքն բանին էութիւնն : Աւելի պարզ ըսեմ, միտքն չկրնար բան մը ճանչնալ՝ ինչուան չճանչնայ զանիկայ է. և ոչ բան մը բանէ զանազանել, ինչուան որ չըսէ Ի և Ի. ուրեմն ամեն բանի, (եթէ մտաւոր և եթէ նիւթաւոր) կարևորագոյն և անհրաժեշտ յատկութիւնն էն է : Մէկ խօսքով ամեն բան մտաւոր և գոյաւոր է : Բայց զարմանքն և խնդիրն այս է, թէ՛ ամենայն ինչ է ըլլալով, արդեօք էն այլ ամենայն ինչ է. արդեօք մի միայն է Ին ու զանազան ամենազան կ'երևի, թէ են և զանազան էութիւնք : — Այսոր՝ երկայն պատասխան և պատճառ տալու հիմայ չէ տեսն. բայց այսչափ ըսեմ որ, եթէ ես ըսողս և դու ըսողդ, մէկ հասկըցող և մէկ չհասկըցող մը՝ նոյն են, ապա ամենայն է կամ Իսկ մի են. իսկ եթէ ատուք տարբերին, ես և դու նոյն չեն, ապա երկուքս այլ է եմք, բայց ոչ նոյն է՞ կամ նոյն էութիւն :

Հիմայ եթէ կ'ուզես Ի՞ն մեծագոյն ևս գերազանցութիւնն և ամենակարևոր

ըլլալն լաւ եւս իմանալ, հարցո՛ւր անոր առաջին վարդապետողին . այն՝ որ այսպիսի խնդրոյ վրայ միտք բանեցընող եւ անոր արգասիքն յետնոց աւանդողաց առաջին մարդն է, եւ հնազոյն քան զամենայն ծանօթ զրոգս, միանգամայն եւ մեծագոյն զրոգ անհամեմատ աննման իրմէ առաջ եւ վերջը եղողներէն . եւ անշուշտ այնպէս այլ պիտի ըլլայ միշտ, եթէ եւ Սողոմոն, Հովնուս, Արիստոտէլ եւ Օգոստինոս կարենան իրենց հաւատարեւ եւ գերազանց գտնել, միշտ անհաւատարելի պիտի մնայ Մովսէս : Իր աւտեն, որ է ըսել՝ մենէ 3500 տարի առաջ, միայն եղիպտացիք ճանչցուած եւ հռչակուած էին գիտութեամբ, որոյ արգասիքն մինչև հիմայ կենդանի տեսնուի իրենց հին եւ հազարամեայ պապիրներու եւ քարերու վրայ : Այդ եղիպտացւոց իմաստնագոյն անձանց, արքունի քրմաց աշակերտեցաւ Մովսէս, եւ մէջերնին ապրեցաւ ինչուան իրկենաց քառասներորդ տարին . անոնց ամեն իմաստութիւն եւ գաղտնի գիտութիւններն այլ սովբեցաւ, եւ իր արբահաման ճշմարիտ աստուածածանօթ կրօնից լուսով համեմատելով՝ քան ըզքումն եղիպտոսի եւ քան զամեն մարդ ժամանակակից գերազանցեց գիտութեամբ : Հարկն ստիպեց որ յետ քառասուն տարւոյ փախչի թողու եղիպտոսի արքունիքը եւ քրմարանը, եւ երթայ անցնի Սիւէզի պարանոցէն՝ Մադիանացւոց անապատներուն մէջ, Սինայ եւ Քորեբ լեռանց ստորոտքը թափառի քառասուն տարի այլ, իր աներոջ հօտերը արածելով՝ Ասիոյ եւ Ափրիկոյ լծակից ընդարձակ ոստիաններուն մէջ . ինչպէս յետոյ զարձեալ ուրիշ քառասուն տարի մ'այլ նոյն անապատներուն եւ քիչ մ'այլ աւելի անդին թափառի, քանի մը միլիոն երբայեցի հօտին առաջնորդելով՝ ինչուան որ հասցընէ անոնց զիտած փարախը, Պաղեստինու երկիրը : Հովուութիւնն, մանաւանդ հին աւտեն, պատուելի եւ բաւական պարապ հանգիստ զուարճալի կեանք մ'էր . երկայն ժամեր կ'ընծայէր

արթուն մտքի եւ տաք սրտի մը դիտողութիւններ ընելու տիեզերաց բնական եւ բարոյական օրինաց վրայ . եւ բարեմոյն աստուածասէր սիրտ մը՝ կրնար ըլլալ Դաւիթ սաղմոսահայր, Ամովս մարգարէ եւ այլն . մեր հովիւն այլ եղաւ Մովսէս մարգարէ, պատմիչ, օրէնսդիր, երգող եւ հրաշագործ, որոյ նման կ'ըսէ Ս. Գիւրքն « Ոչ եւս եկաց մարգարէ » ըէ յիսրայելի իրրեւ զՄովսէս . այր՝ զոր » ծանեաւ Տէր դէմ յանդիման » : Արդ Այրս այս իր թափառած անապատներուն ընդարձակ հորիզոնին պէս՝ ընդարձակ մտածութեամբ, եւ իր տեսած պարզ երկնից նման՝ բարձր ու յստակ սրտածութեամբ՝ գերագոյն ծանօթութիւններ ստացաւ, եւ աւելին՝ Աստուծոյ ծածուկ թելադրութեամբն : Եւ երբ երկրորդ քառասուն տարին այլ լմանցուց, եւ Աստուած հրաշալի կերպով մը երևելով՝ հրամեց որ երթայ երրորդ եւ վերջին կենաց շրջանը սկսի՝ իր ազգին առաջնորդութեամբ, Մովսէս՝ իմացաւ որ դեռ մեծագոյն քան կայ ճանչնալու, « զարձոյց Մովսէս գերեսս իւր, քանզի » երկնէր հայել առաջի Աստուծոյ », կ'ըսէ Գիւրքն . մինչև Աստուծոյ դեսպան ըլլալն յիշելով եւ քաջալերելով, ուզեց իր գիտութիւնը կատարելագործել հասկընալով որ անկարելի է զԱստուած բոլորովին հասկընալ ճարտարութեամբ կամ համեստութեամբ մը հարցուց անոր (իբր բոլոր երբայեցի ազգին կողմէն երաշխաւորութեամբն), թէ ի՞նչ է Աստուծոյ անունն . — եւ անուամբն 'ի հարկէ աւելի վեր բան կ'ուզէր իմանալ, վասն զի արդէն Աբրահամայ եւ Յակոբայ ըսած անուամբ կոչէր զԱստուած . իսկ Աստուած՝ զիջանելով՝ մէկ բառով իմացուց անոր իր անունը եւ իր բնութիւնը . ըսաւ . « Ես եմ Աստուած որ » Ինչ . . . այս է անուն իմ յաւիտենա » կան » : Եւ ըստ հրաշալի բաղդի (Հայոցս) այս անունն այլ՝ մեր լեզուին մէջ թարգմանի՝ Է :

Անշուշտ հիմայ աւելի իմացար վերնադրիս մեծութիւնն . ճանչցար ինչ է Է՞ որով Աստուած ինք զինքն յայտնեց .

և այն է իր վեհագոյն նշանն և յայտնիչն ՚ի միջի մարդկան, որք վասն այնուրիկ իրենց սրբագոյն և հաստատագոյն յիշատակաց վրայ, (ինչպէս հին քահանայապետն Հրէից, հիմայ այլ կոնգակը, գաշնագիւրք, եկեղեցիք, և այլն) դրոշմեն այդ նշանը, է: — Ուրեմն Աստուած այլ իր էութիւնը մարդկան յայտնելու ամենէն պատշաճ բան գտաւ և եցոյց զ՚ի: որով ոչ եթէ Աստուած ինքն ինչպէս զինքն գիտէ՝ այնպէս կու ճանչնամք մեր, այլ այդով աւելի լաւ կրնամք ճանչնալ քան ուրիշ բանով, քանի որ մեր մարդկութեան այս չափաւոր վիճակին մէջ եմք: Արդ իմանալով որ Աստուած ինքն՝ յորմէ ամենայն ինչ՝ է, ՚ի հարկէ կ'իմանամք, որ ինքն իսկ է ին գերագոյն, ինքն միայն կու ճանչնայ և զինքն և զմեզ՝ որպէս և եմք, իսկ մենք գիտեմք զմեզ է, բայց ոչ լաւ գիտեմք թէ ինչպէս է, ևս առաւել Աստուծոյ էութիւնը անկատար ճանչնամք. ասկէ սրտերնիս կու վկայէ թէ որ ին Աստուած՝ և իմ էս կամ եսս՝ տարբեր են. և ոչ միայն այն գերագոյն է՝ տարբեր է իմ էս, այլ նաև իմ արտաքին կերպարանքէս կամ մարմնէս, որ յար և նման է ուրիշ զգալի և նիւթական տարերաց. ըսել է որ տարրն այլ Աստուծոյ մէ և ինծմէ զատ երրորդ է. և այս բաները ճանչնալու զօրութիւնն այսինքն ին կամ էական ծանօթութիւնն (ըստ այդ ծանօթութիւնն ինչպէս իսկապէս է և կու ճանչնայ Աստուած) այս ծանօթութիւնս այլ կ'ըսեմ, կրնայ սեպուիլ զատ չորրորդ է մը, զոր և հարկ է անուանեմք սովորական բառիւ ձգնարտութիւն:

Վերջաբանեմ. ամենայն ինչ է, և ոչ ամենայն ինչ մի և նոյն է. յորմէ հետևի՝ թէ հարկ է զի որ և իցէ է՝ որոշ յատկութիւն և սահման մ'ունենայ, և շփոթ անհաստատ բան մը չըլլայ. և աստի հետևի որոշողութիւն կամ զատութիւնը (է՛ն և էին) էական. զոր և չորս կերպով կամ տեսակաւ ճանչցանք. այսինքն է Աստուած. է՝ ես կամ մարդս կամ հոգիս. է՝ տարրն. և

է՝ ճշմարտութիւնն: — Այս չորրորդս և յետինս՝ որ երբեմն առաջնոյն հետ նոյնանայ կամ նոյն կ'իմացուի, նկատմամբ մեր մտացս՝ չատ կերպ զանազանի և չատ խորհելու, քննելու, գիտելու բան է. և ահա գրութեանս նպատակն այլ այս է, քննել զէն, ճանչնալ զճշմարտութիւնը: — Հիմայ, ով ընթերցող, եթէ դու այլ արժանի սեպես ին՝ կամ զանազանեալ է՝ քննութիւնը և ծանօթութիւնը, կ'ըսես աղէկ է. իսկ եթէ չես հաճիր՝ կ'ըսես ոչ. և դարձնես թղթիս և ըսը յարեմուտս:

Փ ֓.

Մանկութիւնն առ Հայաստան.

Հայաստանն աշխարհ ցանկալի, քոյ արևուն արեմուտք միայն իմ աչերս տեսան, այս քանի ման կու գայ Արարատ արևուն բոլորաիք, և քոյ բաղդին երբէք չծագէ արեւը. նոր արև նոր տարւոյ՝ զազգ ամեն և զաշխարհ ՚ի թունդ է հաներ, և Հայաստան միայն իր յաւերակսն ինչո՞ւ հեծէ. Թրդունքներ՝ ջրհեղեղի տան երևոյթ, ցաւոց նուրա վիհ՝ անդունդ է ովկիանու, ցուրտ հիւսիսի մունչել հառաչանքնորա. և երբ կամ ոյք այս բիւր չարեաց վերջ և դարման:

Ո՛յք —

Հայացն մանկութիւն, հայրենեաց բաղդին դուք լիջիք արեւը:

Ե՛րբ —

Երբ եռանդուն փափաքներ, երբ դու ծունեաց ջանք՝ ձեր ճակատ պսակեն: